ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԱԺԲԳ

ԵՐԵՎԱՆ-2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

.1.	ՆԱԽԱԲԱՆ	3
.2.	ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	3
	Ինքնաշխատ գործառույթների իրականացում	*3*
	Հարցումների հիման վրա տեղեկանքների և աջակցության տրամադրում	*3*
	Ազգային ժողովի կարողությունների շարունակական զարգացում	*7*
	Այլ աշխատանքներ	*8*

ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի բյուջետային գրասենյակը (այսուհետ՝ Բյուջետային գրասենյակ) հաշվետու ժամանակահատվածում (01.07.2021թ.-30.09.2021թ) գործել է հետևյալ կազմով՝ Գագիկ Բարսեղյան՝ համակարգող փորձագետ և Աշոտ Եղիազարյան՝ փորձագետ:

Բյուջետային գրասենյակի կողմից 2021 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը կազմվել է Ազգային ժողովի աշխատակարգի 120-րդ կետի պահանջներից ելնելով:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ինքնաշխատ գործառույթների իրականացում (Գործառույթներ որոնք իրականացվում են իմպերատիվ՝ իրավական ակտերով սահմանված դեպքերում և ժամկետներում, անկախ հարցման առկայության)

Բյուջետային գրասենյակը ղեկավարվելով Ազգային ժողովի աշխատակարգի 115-րդ կետի 10-րդ ենթակետերով սահմանված ժամկետներում պատրաստել և Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովին է տրամադրել Հայաստանի Հանրապետության 2021 թվականի առաջին կիսամյակի պետական բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ Կառավարության ներկայացրած տեղեկանքի ամփոփ նկարագիրը:

Ընդհանուր առմամբ, Բյուջետային գրասենյակը 2021 թվականի ինն ամիսների ընթացքում սահմանված ժամկետներում պատրաստել և Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովին է տրամադրել նաև՝

- Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության ամփոփ նկարագիրը,
- Հայաստանի Հանրապետության 2021 թվականի առաջին եռամսյակի պետական բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ Կառավարության ներկայացրած տեղեկանքի ամփոփ նկարագիրը:

Հարցումների հիման վրա տեղեկանքների և աջակցության տրամադրում

Բյուջետային գրասենյակը 2021 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում ստացել է 15 հարցում, որից 2-ը պատգամավորական և 13-ը մշտական հանձնաժողովներից: Ընդհանուր առմամբ, ինն ամիսների ընթացքում ստացվել է 75 հարցում, որից 29-ը պատգամավորական, 4-ը խմբակցություններից և 42-ը մշտական հանձնաժողովներից:

Ստացված հարցումների հիման վրա պատրաստվել և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահին ու նրա տեղակալներին, մշտական հանձնաժողովներին ու խմբակցություններին, ինչպես նաև պատգամավորների է տրամադրվել 116 տեսակի տեղեկանքներ: Ընդհանուր առմամբ, ինն ամիսների ընթացքում պատրաստվել են 391 տեսակի տեղեկանքներ:

Բյուջետային գրասենյակը ղեկավարվելով Ազգային ժողովի աշխատակարգի՝

1. 115-րդ կետի 5-րդ ենթակետով և 117-րդ կետի 3-րդ ենթակետով, պատրաստել է ոլորտային տեղեկանքներ Հայաստանի Հանրապետության 2021 թվականի (մարտ, ապրիլ, մայիս) պետական բյուջեներով նախատեսված ծախսերի կատարման ընթացքի վերաբերյալ: Պատրաստված 64 (ինն ամիսներին 182) տեսակի տեղեկանքները տրամադրվել են Ազգային ժողովի համապատասխան մշտական հանձնաժողովներին՝ ըստ իրենց գործունեության ոլորտների, ինչպես նաև Ազգային ժողովի նախագահին, Ազգային ժողովի նախագահի տեղակալներին, բոլոր խմբակցություններին և պատգամավորների: Մասնավորապես,

- առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովին՝ առողջապահության ոլորտի ծախսեր,
- աշխատանքի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովին՝ սոցիալական ապահովության ոլորտի ծախսեր,
- արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովին՝ արտաքին հարաբերությունների ոլորտի ծախսեր,
- գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովին՝ կրթության, հանգստի, մշակույթի և կրոնի, <<Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ>> բաժնի <<Ընդհանուր բնույթի հետազոտական աշխատանք>> և <<Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ>> խմբերի համար նախատեսված ծախսեր,
- տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության եւ բնապահպանության հարցերի մշտական հանձնաժողովին՝ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության, մարզպետարանների, կառավարության տարբեր մակարդակների միջև իրականացվող ընդհանուր բնույթի տրանսֆերտների, <<Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ>>, գյուղատնտեսության, անտառային տնտեսության, ձկնորսության և որսորդության, ջրամատակարարման և շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտների ծախսեր,
- պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովին՝ պաշտպանության, հասարակական կարգի և անվտանգության ու փրկարար ծառայության ոլորտների ծախսեր,

- պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովին՝ դատական գործունեության և իրավական պաշտպանության, դատախազության, կալանավայրերի ու նախաքննության բնագավառներում ծախսեր,
- մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովին՝ իրավական պաշտպանության և մարդու իրավունքների պաշտպանության բնագավառներում ծախսեր,
- ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովին՝ պետական բյուջեի ծախսեր, ներառյալ պետական պարտքի գծով գործառնություններին ուղղված ծախսեր,
- տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովին՝ <<Տնտեսական հարաբերություններ>> բաժնի <<Ընդհանուր բնույթի տնտեսական, առևտրային աշխատանքի գծով հարաբերություններ>> խմբի, Գյումրու և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնների գործունեության իրականացման ծրագրի, SS ոլորտի խթանման ծառայությունների, լեռնաարդյունահանման, արդյունաբերության և շինարարության, տրանսպորտի և կապի, <<Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայությունների (այլ դասերին չպատկանող)>>, վառելիքի և էներգետիկայի ոլորտների ծախսեր,
- պետական բյուջեի ծախսերն ամբողջությամբ, ըստ հիմնական ծախսային ուղությունների:

Տեղեկատվության աղբյուրներն են հանդիսացել <<Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքը, «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 2215-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության <<LS Rep>> ծրագրային համակարգը:

2. 115-րդ կետի 5-րդ ենթակետով և 117-րդ կետի 3-րդ ենթակետով պատրաստել է 6 (ինն ամիսներին 18) տեսակի համեմատական-վերլուծական տեղեկանքներ Հայաստանի Հանրապետության 2021 թվականի (հունվար-հունիս, հունվար-հուլիս, հունվար-օգոստոս) պետական բյուջեներով նախատեսված հարկային եկամուտների և պետական տուրքերի հավաքագրման ընթացքի վերաբերյալ: Դրանք տրամադրվել են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահին, Ազգային ժողովի նախագահի տեղակալներին, բոլոր մշտական հանձնաժողովներին ու խմբակցություններին և պատգամավորների:

Տեղեկատվության աղբյուրներ են հանդիսացել Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի ինտերնետային կայքում հրապարակված տեղեկատվությունները և «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական

բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 2215-Ն որոշումը;

3. 115-րդ կետի 7-րդ ենթակետով և 117-րդ կետի 4-րդ ենթակետով, պատրաստել է համեմատական-վերլուծական տեղեկանքներ Հայաստանի Հանրապետության 2019-2021 թթ. (հունվար-մայիս, հունվար-հունիս, հունվար-հուլիս, հունվար-օգոստոս) սոցիալ-տնտեսական իրավիճակը բնութագրող հիմնական ցուցանիշների վերաբերյալ: Պատրաստված 8 (ինն ամիսներին 20) տեսակի տեղեկանքները տրամադրվել են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահին, Ազգային ժողովի նախագահի տեղակալներին, բոլոր մշտական հանձնաժողովներին ու խմբակցություններին, ինչպես նաև պատգամավորների:

   Տեղեկատվության աղբյուրներ են հանդիսացել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական կոմիտեի ինտերնետային կայքի հրապարակումները՝ 2017-2021թթ. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ;

4. 115-րդ կետի 7-րդ ենթակետով և 117-րդ կետի 4-րդ ենթակետով, պատրաստել է 30 (ինն ամիսներ 90) տեսակի համեմատական-վերլուծական տեղեկանքներ Հայաստանի Հանրապետության 2021 թվականի հունիս, հուլիս, օգոստոս,ամիսների վերջի դրությամբ) պետական պարտքերի վերաբերյալ, որոնք տրամադրվել են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահին, Ազգային ժողովի նախագահի տեղակալներին, բոլոր մշտական հանձնաժողովներին ու խմբակցություններին, ինչպես նաև պատգամավորների:

   Տեղեկատվության աղբյուրներ են հանդիսացել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության ինտերնետային կայքում հրապարակված Հայաստանի Հանրապետության պետական պարտքի ամսեկան տեղեկագրերը;

5. 115-րդ կետի 4-րդ ենթակետով և 117-րդ կետի 3-րդ ենթակետով, օգտագործելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության «ԳԳՕ» համակարգի (LS Finance) հնարավորությունները պատրաստել է 8 (ինն ամիսներ 28) տեսակի համեմատական-վերլուծական տեղեկանքներ (օպերատիվ տեղեկատվություն) Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեներով նախատեսված հարկային եկամուտների և պետական տուրքերի վերաբերյալ, ներառյալ 2018-2020թթ (հաշվետվության ձև 8210), որոնք տրամադրվել են Ազգային ժողովի նախագահին, Ազգային ժողովի նախագահի տեղակալներին, բոլոր խմբակցություններին, Ազգային ժողովի տնտեսական հարցերի, ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովներին և պատգամավորների;
6. 115-րդ և 117-րդ կետերի 1-ին ենթակետերով, պատրաստել է համեմատական տեղեկանքներ (4 տեսակի տեղեկանքներ) Հայաստանի Հանրապետության 2020

թվականի պետական բյուջեի կատարման հաշվետվության հիմնական ցուցանիշների վերաբերյալ, ներառյալ 2017-2019թթ.:

Ընդհանուր առմամբ, Բյուջետային գրասենյակը ինն ամիսների ընթացքում պատրաստել է նաև՝

- ինֆոգրաֆիկ, համեմատական վերլուծություններով տեղեկանքներ (2 տեսակի տեղեկանքներ) Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարման հաշվետվության հիմնական ցուցանիշների, պաշտպանության, հասարակական կարգի և անվտանգության վերաբերյալ, ներառյալ 2017-2019թթ.: Դրանք տրամադրվել են Ազգային ժողովի բոլոր պատգամավորներին և ոլորտային մշտական հանձնաժողովներին,
- տեղեկանքներ (Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարման հաշվետվության համատեքստում) Հայաստանի Հանրապետության 2018-2020թթ. պետական բյուջեներով 33 բյուջետային գլխավոր կարգադրիչների՝ գերատեսչությունների, համար սահմանված ֆինանսական, ոչ ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ, որոնք տրամադրվել են Ազգային ժողովի պատգամավորների և ոլորտային մշտական հանձնաժողովներին, ըստ գործունեության ոլորտների:

Ազգային ժողովի կարողություններ շարունակական զարգացում

Բյուջետային գրասենյակը Ազգային ժողովի աշխատակարգի 117-րդ կետի համաձայն, Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի հարցմանն ի պատասխան, Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի հետ համատեղ և Միավորված ազգերի զարգացման ծրագրերի կազմակերպության <<Ժամանակակից խորհրդարան՝ ժամանակակից Հայաստանի համար>> ծրագրի աջակցությամբ ու համագործակցությամբ սույն թվականի սեպտեմբերի 24-ից 26-ը Ծաղկաձորի <<Արարատ Ռեզորտ>> հյուրանոցում Ազգային ժողովի պատգամավորների և Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի աշխատակազմի համար կազմակերպել էր աշխատաժողով <<Հայաստանի Հանրապետության բյուջետային գործընթացը.ծրագրային և գենդերազգայուն բյուջետավորում>> թեմայով: Աշխատաժողովի ընթացքում զեկուցումներով հանդես են եկել Ազգային ժողովի բյուջետային գրասենյակի համակարգող փորձագետ Գագիկ Բարսեղյանը, փորձագետ Աշոտ Եղիազարյանը և Հետազոտությունների և քաղաքականության մշակման կենտրոնի գործադիր տնօրեն, ՄԱԶԾ ՆՀԺԽ ծրագրի փորձագետ Մարիա Ռիստեսկան: Աշխատաժողովին մասնակցել է 22 մասնակից, այդ թվում՝ 16 պատգամավոր:

Ընդհանուր առմամբ, Ազգային ժողովի կարողությունների շարունակական զարգացման գործառույթի իրացման շրջանակներում, Բյուջետային գրասենյակը ինն ամիսների ընթացքում կազմակերպել է երկու սեմինար-աշխատաժողով (առաջին կիսամյակի ընթացքում Բյուջետային գրասենյակը Ազգային ժողովի աշխատակարգի 117-րդ կետի համաձային, Ազգային ժողովի <<Լուսավոր Հայաստան>> խմբակցության հարցմանն ի պատասխան, խմբակցության փորձագետների և պատգամավորների օգնականների համար կազմակերպել էր սեմինար <<Հայաստանի Հանրապետության բյուջետային գործընթացը և ծրագրային բյուջետավորումը Հայաստանի Հանրապետությունում>> թեմայով: Սեմինարին մասնակցել է 11 մասնակից), որին մասնակցել են 33 հոգի, այդ թվում՝ 16 պատգամավոր:

Այլ աշխատանքներ

Բյուջետային գրասենյակի աշխատակազմն ակտիվորեն ներգրավված է՝

- «Հայաստանի Հանրապետությունում պետական ֆինանսների քաղաքականության բարեփոխումների ծրագիր» ԵՄ բյուջետային ծրագրով Ազգային ժողովի մասով ամրագրված թիրախների մոնիթորինգի գործընթացում,
- Պետական ֆինանսների կառավարման համակարգի 2019-2023 թվականների բարեփոխումների ռազմավարության մշակման, իրագործման և մոնիթորինգի գործընթացում:

Բյուջետային գրասենյակի համակարգող փորձագետ Գագիկ Բարսեղյանը, Ազգային ժողովի պատգամավորների օգնականների համար, Ազգային ժողովի աշխատակազմի և Միավորված ազգերի զարգացման ծրագրերի կազմակերպության <<Ժամանակակից խորհրդարան՝ ժամանակակից Հայաստանի համար>> ծրագրի կողմից կազմակերպված սեմինարին հանդես է եկել զեկուցմամբ՝ <<Ազգային ժողովի բյուջետային գրասենյակի ներկան և զարգացման հեռանկարները>> թեմայով:

Ինն ամիսների ընթացքում, Բյուջետային գրասենյակի աշխատակազմի կարողությունների զարգացման նպատակով փորձագետները մասնակցել են նաև ՄԱԿ-ի կողմից կազմակերպված <<Գենդերային բյուջետավորում>> թեմայով սեմինարին: Առաջին կիսամյակի ընթացքում Բյուջետային գրասենյակի աշխատակազմի կարողությունների զարգացման նպատակով փորձագետները մասնակցել են նաև մասնագիտական կարողությունների զարգացմանն ուղղված վերոնշյալ դասընթացներին.

1. ՀՀ 2022-2024 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի և ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի նախագծերի մշակման մեթոդական ցուցումների, ինչպես նաև ՄԱԿ-ի «Կայուն զարգացման 2030 օրակարգում» ներառված կայուն զարգացման նպատակների և դրանց գծով սահմանված գլոբալ ցուցանիշների վերաբերյալ առցանց սեմինար-խորհրդակցություն (ՀՀ ֆինանսների նախարարություն),

2. «Ծրագրի պլանավորում, մոնիթորինգ և գնահատում»-18.02.2021թ.-19.02.2021թ. (Հանրապետական Միջազգային Ինստիտուտ),
3. «Ժամանակի արդյունավետ կառավարում»- 25.02.2021թ.-26.02.2021թ. (Հանրապետական Միջազգային Ինստիտուտ),
4. <<Ֆինանսական վերլուծության հմտություններ>>-23.02.2021թ-23.03.2021թ. (Հանրապետական Միջազգային Ինստիտուտ),
5. << Կայուն զարգացման նպատակների բյուջետավորում>>-Աշխատաժողով: